



ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

« 12 » հոկտեմբերի 2023թ.

ՀՐԱՄԱՆ N 484-Ա

«ՏՐԱՆՍԱՎԻԱ ՖՐԱՆՍ» ԱՎԻԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ 29-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ՄԱՍԻ «Ձ» ԿԵՏՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Պետական տուրքի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի թիվ 1005-Ն որոշման N 1 հավելվածի 19-րդ կետով, հիմք ընդունելով Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի ապրիլի 22-ի N 182-Ա և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 12-ի N 346-Ա հրամանները և «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերության 2023 թվականի սեպտեմբերի 19-ի հայտը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերությանը (այսուհետ՝ Ընկերություն) տրամադրել Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ երթուղով՝ 2023 թվականի նոյեմբերի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 24-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ, 2023 թվականի դեկտեմբերի 25-ից մինչև 2024 թվականի հունվարի 14-ը՝ շաբաթական 3 (երեք) չվերթ հաճախականությամբ, 2024 թվականի հունվարի 15-ից մինչև 2024 թվականի փետրվարի 4-ը՝ շաբաթական 1 (մեկ) չվերթ հաճախականությամբ, 2024 թվականի փետրվարի 5-ից մինչև 2024 թվականի մարտի 30-ը՝ շաբաթական 2 (երկու) չվերթ հաճախականությամբ Հայաստանի

Հանրապետության տարածք, տարածքի ներսում և տարածքից դուրս կանոնավոր առևտրային օդային հաղորդակցությունների իրականացման թույլտվություն:

2. Սահմանել, որ սույն հրամանի 1-ին կետով նախատեսված Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/- Փարիզ/LFPO/ երթուղով չվերթները համարվում են Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի պարտականությունները կատարողի 2022 թվականի ապրիլի 22-ի N 182-Ա հրամանով տրված թույլտվության շրջանակներում իրականացվող չվերթների շարունակությունը ԻԱՏԱ 2023-2024 թվականի ձմեռային նավիգացիոն ժամանակահատվածում, որոնք բավարարում են Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 1936-Ն որոշման հավելվածով նախատեսված պայմաններին, չսպասարկված ուղղությունների և չվերթների հաճախականությունների պահանջներին և որոնց վրա տարածվում է Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի նախագահի 2022 թվականի հուլիսի 12-ի N 346-Ա հրամանի 1-ին կետով նախատեսված արտոնությունը:

3. Կոմիտեի նախագահի օգնականին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանի և թույլտվության տեղադրումը Կոմիտեի կայքում:

4. Կոմիտեի օդային փոխադրումների կարգավորման վարչության պետի պարտականությունները կատարողին՝ սահմանված կարգով ապահովել սույն հրամանով նախատեսված թույլտվության հանձնումն Ընկերությանը:

 Recoverable Signature

X 

ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ


Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ 139/2023
ՕՏԱՐԵՐԿՐՅԱ ՕԴԱՆԱՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՏԱՐԱԾՔ, ՏԱՐԱԾՔԻ ՆԵՐՍՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԻՑ ԴՈՒՐՍ ԿԱՆՈՆԱՎՈՐ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ
ՕԴԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

PERMISSION 139/2023
TO THE FOREIGN AIRCRAFT OPERATOR FOR SCHEDULED AIR
SERVICES OPERATION TO, FROM AND WITHIN THE TERRITORY OF THE REPUBLIC OF
ARMENIA

Օդանավ շահագործողը Aircraft Operator	«Տրանսավիա Ֆրանս» ավիաընկերություն “Transavia France”
Օդանավի (օդանավերի) տիպը (տիպերը) Type(s) of aircraft(s)	B738
Հաճախականությունը Frequency	01.11.23-24.12.23՝ շաբաթական 2 չվերթ 25.12.23-14.01.24՝ շաբաթական 3 չվերթ 15.01.24-04.02.24՝ շաբաթական 1 չվերթ 05.02.24-30.03.24՝ շաբաթական 2 չվերթ 01.11.23-24.12.23 2 flights per week 25.12.23-14.01.24 3 flights per week 15.01.24-04.02.24 1 flight per week 05.02.24-30.03.24 2 flights per week
Երթուղին Air route	Փարիզ/LFPO/-Երևան/UDYZ/-Փարիզ/LFPO/ Paris/LFPO/-Yerevan/UDYZ/- Paris/LFPO/
Թույլտվության գործողության ժամկետը Permission validity	01/11/2023 մինչև 30/03/2024 01/11/2023 till 30/03/2024

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ
ԱՎԻԱՑԻԱՅԻ ԿՈՄԻՏԵԻ
ՆԱԽԱԳԱՀ
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
CHAIR OF CIVIL AVIATION
COMMITTEE
MIHRAN KHACHATRYAN

 Recoverable Signature

X  12.10.2023
ՄԻՀՐԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ (տպալու ամսաթիվը)
Signed by: KHACHATRYAN MIHRAN 3308540266 (date of issue)

